

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ  
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY  
FACULTY OF HISTORY

**ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ**  
**ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ**

**ИСТОРИЯ И КУЛЬТУРА**  
**АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ**

**HISTORY AND CULTURE**  
**JOURNAL OF ARMENIAN STUDIES**

**№ 2**

**ԵՐԵՎԱՆ - ԵՐԵՎԱՆ - YEREVAN**  
**ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS**  
**2020**

## ԲԱԶՄԱՎԱՍՏԱԿ ԱԶԳԱԳՐԱԳԵՏԻ ՆՈՐ ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԵՊՀ հնագիտության և ազգագրության ամբիոնի պրոֆեսոր, պատմագիտության դոկտոր Ռաֆիկ Նահապետյանը բոլորովին վերջերս «Ազգաբանական ուսումնասիրություններ» վերտառությամբ հրատարակեց իր ուսումնասիրությունները երեք գրքով: Հեղինակը հայ ազգագրության սկզբնաղբյուրների և պատմության վերաբերյալ վերջին տարիների հրատարակած իր ուսումնասիրությունները ներկայացրել է 1-ին և 2-րդ գրքերում՝ փորձելով ի մի բերել հայ ազգագրական գիտության անցած ուղու հնարավորինս ամբողջական պատկերը:

Առաջին՝ «Ազգաբանական ուսումնասիրություններ – 1. Հայ ազգագրության սկզբնաղբյուրներ» (Երևան, ԵՊՀ հրատ., 2019, 298 էջ) գրքում ներառվել են հայ ազգագրության՝ հնագույն շրջանից մինչև XVIII դ. թվագրվող սկզբնաղբյուրների մի զգալի մասը՝ չորս գլուխներով: Առաջին գլուխը կրում է «Դաշտային ազգագրական նյութերը՝ հայ ազգագրական գիտության ուսումնասիրության կարևոր սկզբնաղբյուր» խորագիրը. փորձառու դասախոսը անդրադառնում է դաշտային ազգագրական նյութերի գրառման աշխատանքների իրականացման՝ իր կողմից կիրառվող մեթոդներին ու Հայաստանում ազգագրական նյութերի գրառման սկզբնավորման պատմությանը: Երկրորդ՝ «Հնագիտական (ժայռապատկերներ) և բանահյուսական նյութերը՝ ազգագրական հետազոտությունների սկզբնաղբյուրներ» գլխում ներկայացվում են «ժայռապատկերները՝ Հայկական լեռնաշխարհի հնագույն բնակիչների ազգագրական ուսումնասիրության սկզբնաղբյուր» և «Ամունսարնտանեկան հարաբերությունների արտացոլումը «Սասնա ծռեր» էպոսում»՝ գիտական մեծ հետաքրքրություն ներկայացնող հոդվածները: Երրորդ գլխում անդրադառնում է պատմագրական սկզբնաղբյուրներին, որում ներկայացվում են պատմագիրներ Փավստոս Բուզանդի, Ազաթանգեղոսի, Առաքել Դավրիժեցու երկերի, Եկեղեցական կանոնական և աշխարհիկ այլ աղբյուրների ազգագրական-սկզբնաղբյուրային արժեքը: Չորրորդ գլխում էլ անդրադարձել է միջնադարյան արաբ և եվրոպացի ճանապարհորդների ուղեգրությունների Հայաստանի և հայերի կենցաղի ու մշակույթի վերաբերյալ բազմափայտ և բազմաբանակ ազգագրական մեկնություններին: Գրքում ներառված ուսումնասիրությունները ունեն աղբյուրագիտական կարևոր արժեք հայագիտությամբ, այդ թվում՝ ազգագրությամբ և մշակութաբանությամբ մասնագիտացող ուսանողների, գիտական հանրության համար:

«Ազգաբանական ուսումնասիրություններ – 2. Հայ ազգագրության պատմություն» (XVIII դ. երկրորդ կես – 1980-ական թթ.) (Երևան, ԵՊՀ հրատ., 2019, 404 էջ) 2-րդ գրքում լուսաբանվում են ազգագրական գիտության ձևավորման և կայացման հիմնական փուլերը: Ներկայացվում են XVIII դ. երկրորդ կեսից մինչև XIX դ. 50-60-ական թթ. հայ ազգագրական գիտության ակունքներում Մ. Թաղիադյանի, Խ. Աբովյանի, Մխիթարյան միաբանության նշանավոր գործիչներ Ղ. Ինճիճյանի, Մ. Բժշկյանի՝ որպես ազգագրական նյութերի բանահավաքչության նախաձեռնողների, ազգաբանական գիտությունը սկզբնավորողների գործունեությանը վերաբերող հետազոտությունները: Այնուհետև հայ ազգագրական գիտության կայացման երկրորդ փուլի՝ 1860-1880-ական թթ. մասնագիտական ծրագիր-հարցարաններ հիմնողներ Գ. Սրվանձտյանցի, Գ. Խալաթյանցի և Նրանց հետևորդներ Ղ. Ալիշանի, Խրիմյան Հայրիկի և այլոց ազգաբանական գործունեությանը վերաբերող ուսումնասիրություններում Ռ. Նահապետյանի կողմից հանգամանորեն բնութագրվում են Նրանց կազմած ազգագրական առաջին հարցարանների, հայոց ազգային էպոսի հայտնագործության, Էմինյան ազգագրական ժողովածուի դերն ու նշանակությունը՝ հայ ազգագրության և բանահյուսության՝ որպես հայագիտության առանձին գիտակրթական ուղղությունների կայացման գործում: Հայ ազգագրական գիտության կայացման ավարտական փուլի՝ 1890-ական թվականներից մինչև XX դ. սկզբները՝ Ե. Լալայանի և Նրա կողմից հիմնված

«Ազգագրական հանդեսի» ու նրա հետևորդների գործունեությանը վերաբերող ուսումնասիրությունները ներկայացված են համոզիչ, փաստային և հիմնարար: Գրքում առանձին գլխով ներկայացված են խորհրդային շրջանի՝ 1920-1980-ական թթ. ազգագրագետների և ազգագրական հաստատությունների ներդրումը ազգագրական գիտության զարգացման գործում: Այդտեղ գիտական պատշաճ մակարդակով բնութագրված են 1920-1940-ական թթ. Ե. Լալայանի, Խ. Սամուելյանի, Ստ. Լիսիցյանի գիտական և թանգարանաստեղծ, գիտակազմակերպչական գործունեությունը: Մեկնաբանվում են նաև Մ. Աբեղյանի, Յ. Օրբելու, Գ. Ղափանցյանի, Գ. Չուրսինի, Լ. Մելիքսեթ-Բեկի, Ե. Շահագիզի, Վ. Հացունու կատարած ազգագրական և բանահավաքչական ծավալուն գործունեությունը: Գրքում հեղինակի համակողմանի բնութագրությամբ ներկայացվում են 1950-1980-ական թթ. ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի, ԵՊՀ պատմության ֆակուլտետի հնագիտության և ազգագրության բաժնի և ապա՝ ազգագրության ամբիոնի, Սարդարապատի ազգագրության պետական թանգարանի գիտակազմակերպչական, մասնագետ կադրերի պատրաստման, հայ ազգագրական գիտության զարգացման հիմնական ուղղությունների և նրանցում ներգրավված ազգագրագետների նոր սերնդի նշանավոր երախտավորների՝ Վ. Բոդյանի, Դ. Վարդումյանի, Է. Կարապետյանի, Ա. Օդաբաշյանի, Կ. Մելիք-Փաշայանի, Կ. Սեդրոսյանի, Լ. Պետրոսյանի, Յու. Մկրտչյանի, Չ. Խառատյանի, Ս. Հարությունյանի և այլոց ծավալած գործունեությանը: Կարծում ենք, որ սույն գիրքը կարող է օգտակար լինել ինչպես ազգագրությամբ, այնպես էլ պատմագիտությամբ ու մշակութաբանությամբ մասնագիտացող ուսանողների, ասպիրանտների, ինչպես նաև ընթերցող լայն հանրության համար:

«Ազգաբանական ուսումնասիրություններ – 3» (Երևան, «Տիր» հրատ., 2020, 394 էջ) գրքում ներկայացվում են գիտնականի՝ հայ ազգագրության գրեթե բոլոր հիմնախնդիրներին վերաբերող հետազոտությունները, որոնք նույնպես առաջին անգամ են դրվում գիտական շրջանառության մեջ: Դրանք վերաբերում են հայոց երկրագործա-անասնապահական զբաղմունքների և բնակարանաշինության հինավուրց ծագման, Հայկական լեռնաշխարհը՝ քաղաքակրթության հնագույն օրրան լինելու հարցերին, կենսապահովման մշակույթի համալիրներից ժողովրդական բնակարանի, ազգային հագուստի և ուտեստի եթնոմշակութային բնութագրին: Առանձին շարքով ներկայացված են մինչև ցեղասպանությունն ու հայրենազրկումը արևմտահայերի, մասնավորաբար, պատմական Աղձնիքի հայության ժողովրդագրության, տնտեսական-արտադրական մշակույթի կազմակերպման հիմնախնդիրներին, հյուրընկալման ավանդույթներին, ավանդական ընտանիքին, դրա խորհրդանիշ՝ օջախ-թոնրի ժողովրդական պաշտամունքային ընկալումներին, ընտանեկան վարվելակարգին, կնոջ ավանդական կարգավիճակին ու գործառույթներին, քավորի կերպարին վերաբերող հետազոտությունները: Ազգաբանական դիտարկումներ շարքից ներառված են հեղինակի՝ հայուհու ավանդական և ժամանակակից կերպարի, հայոց հոգեկերտվածքի, տոնական համալիրներից՝ Ամանորի, ազգաբանական ու բանահյուսական որոշ հետազոտությունների վերաբերյալ գրախոսական ակնարկները:

Պրոֆեսոր Ռաֆիկ Նահապետյանի «Ազգաբանական ուսումնասիրություններ» երեք գրքով ուսումնասիրությունները լուրջ ներդրում են հայ ազգաբանական գիտության, մասնավորաբար, աղբյուրագիտության և պատմագրության հարստացման բնագավառում: Գրքերը խմբագրվել ու գրախոսվել են ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի առաջատար գիտաշխատողների կողմից:

Հայկ Ավետիսյան – պ.գ.դ., պրոֆեսոր  
Մխիթար Գաբրիելյան – պ.գ.թ., դոցենտ